

# Ժողովուրդ

140  
(2990)

15 հոկտեմբերի երեքշաբթի 2024  
տպագրության ԺԳ տարի

Է. Երեւան, Արուսյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՊԱՏՊԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՇԱՊԻ ՏԱԼՈՒ ԳՈՐԾԸ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋԻ ՄԵՂԱՆԻՆ Է



Իշխանական «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիվ Աղազարյանին կաշառք տալու գործով ՀՀ քաղաքացի Աշոտը մեղադրյալի աթոռին է հայտնվել, իսկ պատգամավորը անպատիժ է մինչ օրս:

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիվ Աղազարյանի դեմ հակակոռուպցիոն կոմիտեում ցուցմունք են տվել, համաձայն որի՝ նա 300 հազար ԱՄՆ դոլար կաշառք է ուզել, որ Հայաստանից, սահմանված ընթացակարգերի խախտմամբ, առանց խոչընդոտների, մանր եղջերավոր անասուններ արտահանեն Արաբական Միացյալ Էմիրություններ:

«Ժողովուրդ» օրաթերթը իր իրազեկ աղբյուրներից տեղեկացավ, որ ԶՊ պատգամավորի դեմ ցուցմունք տված անձին՝ Աշոտին, հակակոռուպցիոն կոմիտեն մեղադրանք է առաջադրել ԶՊ պատգամավոր Հովիվ Աղազարյանին կաշառք փոխանցելու շուրջ պայմանավորվածություն ձեռք բերելու համար, նրա նկատմամբ ընտրված է խափանման միջոց՝ երկրից չբացակայելու արգելքը. սակայն պատգամավոր Աղազարյանին մեղադրանք առաջադրված չէ:

Հիմա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն սպասում է ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի որոշմանը, միգրացիոն դատախազն էլ իր հերթին սպասում է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին քաղաքական հրահանգին, որպեսզի մտնի ԱԺ եւ Աղազարյանին պատգամավորական անձեռնմխելիությունից զրկի եւ մեղադրանք առաջադրի նաեւ կաշառք պահանջողի կամ դրա շուրջ պայմանավորվածություն ձեռք բերող անձի նկատմամբ:

Այս աղմկահարույց գործով «Ժողովուրդ» օրաթերթին առավել ուշագրավ հանգամանքներ հայտնի դարձան. մասնավորապես, որ պատգամավոր Հովիվ Աղազարյանի դեմ ցուցմունք տված անձը՝ Աշոտը, պատմել է իրավապահներին, որ 300 հազար ԱՄՆ դոլար կաշառքը չեն կարողացել տալ ու վերջում պայմանավորվել են 100 հազար դոլար տալ Աղազարյանին: Գնացել, հանդիպել են նրան ՀՀ Ազգային ժողովին հարակից զբոսայգում, եւ հենց այնտեղ 20 հազար դոլար է առաջարկվել Աղազարյանին, սակայն պատգամավորը զայրացել է ու ասել, թե՛ «պայմանավորվել էինք 100 հազար ԱՄՆ դոլար, ինչո՞ւ եք քիչ բերել, չեմ վերցնում»: Առաջարկել է «կգնաք, կավելացնեք նոր կգաք»:

«Ժողովուրդ» օրաթերթը այս տեղեկությունների վերաբերյալ գրուցեց ԱԺ ԶՊ խմբակցության պատգամավոր Հովիվ Աղազարյանի հետ: **«Դարձն Աղազարյան, Աշոտ անունով անձին մեղադրանք են առաջադրել այն բանի համար, որ Ձեզ կաշառք է տվել, ու հակակոռուպցիոն կոմիտեում կա քրեական վարույթ: Այս քրեական գործի շրջանակում Ձեզ հարցաքննության հրավիրել են:**

- Այո:
- Դուք անձամբ գնացել ու հարցաքննվել եք:
- Այո:
- Ի՞նչ եք պատմել այնտեղ. Աշոտն ասում է, որ Ձեզ հետ պայմանավորվել է՝ Ձեզ 300 հազար դոլար կաշառք տալու շուրջ, որ սահմանված ընթացակարգերի խախտմամբ կարողանան մանր եղջերավոր անասուններ արտահանել եմիրատներ:
- Իսուքը 300 հազար դոլարի մասին չէ, 200 հազար դոլար է շրջափվել:

Հարցազրույցն ամբողջությամբ՝ ArmLur.am կայքում:

Միլիարդավոր դրամների պետական գնումներ են արվել ԱԺ նախկին պատգամավոր Միքայել Սեդրակյանի որդուն՝ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության նախկին պատգամավոր Դավիթ Սեդրակյանին պատկանող «Բիդեք» ՍՊԸ-ից: 2024 թվականի հունվարի 1-ից մինչեւ հոկտեմբերի 14-ը «Բիդեք» ՍՊԸ-ի եւ մի քանի գերատեսչությունների միջեւ 7 պայմանագիր է կնքվել, այդ թվում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից պարզեց, որ պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմել է գրեթե 4 միլիարդ դրամ եւ ավելի: Հենց այս ընկերությունն է, որ ստանձնել է Հայոց ցեղասպանության հուշահամալիրի եւ թանգարանի հիմնանորոգման եւ բարեկարգման աշխատանքների կատարումը: Այս ծառայությունը մատուցելու համար Դավիթ Սեդրակյանի ընկերությունը տրամադրվել է 743 մլն ՀՀ դրամ: Մանրամասները, որ Սեդրակյանի «Բիդեք» ՍՊԸ-ի եւ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի միջեւ կնքված պայմանագրերի արժեքը է 844 մլն 937 հազար դրամ, նպատակը՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար պահեստային ճգնաժամային կենտրոնի կառուցման աշխատանքներ:




«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ պետական հիմնարկի վերջին 10 տարիների գլխավոր հաշվապահ, այժմ ԿԳՄՍՆ գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի ամուսինը՝ Վարդան Սարգսյանը, մի քանի ընկերություններում աշխատելով, պետությանը հասցրել է գրեթե 35-40 մլն դրամի վնաս: Կնոջ գործունի պայմանավորված՝ այդ մասին որեւէ պաշտոնական հայտարարություն չի հնչել, ամեն բան կոծկվել է, իսկ պատիժը եղել է ընդամենը հասցված վնասի վերականգնումը: Ընկերության աշխատանքի պատճառով հասցված վնասը եղել է 2013-2022 թվականներին: Համաձայն Վարդան Սարգսյանի հայտարարագրի՝ նա երեք ընկերություններից ստացել է աշխատանքի վարձատրություն՝ «ՖԻՇՄԵՆ ԻՍՊՈՐՏ», «ԱՐՏՖԱՐՄ», «ՔԼԵՎՐ ՏԵՔ» ընկերություններից՝ համապատասխանաբար 4 մլն 200 հազար, 312 հազար դրամ եւ 510 հազար դրամ: Ընկերությունները պատկանում են 3 տարբեր անձանց: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ այս չարաշահման վերաբերյալ քրեական վարույթ կա նախաձեռնված, իսկ Վարդան Սարգսյանը որպես մեղադրյալ է ներգրավված եղել այս գործում: Սարգսյանը անգամ խոստովանել է, որ չարաշահում է թույլ տվել, վնասը փոխհատուցվել է, ինչի պատճառով այս գործը ծածկադավից են արել ու կոծկել, քանի որ Հասմիկ Հակոբյանը ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի ընկերուհիներից է եւ վարդանի գործընկերը՝ դեռ ԾԻԳ-ում աշխատելու ժամանակահատվածից: Այս պատճառով ծածկել են գործը, եւ որեւէ իրավական կառույց պաշտոնական հայտարարություն չի տարածել հիշյալ չարաշահման գործով: Այժմ էլ Հասմիկ Հակոբյանը ԿԳՄՍ-ում համարվում է Անդրեասյանի աջ ձեռքը. բոլոր ֆինանսական հարցերը լուծվում են Հակոբյանի միջոցով: Զուգահեռ արան նշենք, որ եթե նախկին իշխանությունից որեւէ մեկը նման չարաշահումների էպիկենտրոնում հայտնվեր, ներկայիս իշխանությունը կթմբկահարեր այդ մասին բոլոր հնարավոր հարթակներում:



Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի (նախկին Շորժա) Սեւանա լճի լողափնյա տարածքում հանրապետությունում լողի մասսայականացման եւ առողջ ապրելակերպի քարոզման նպատակով օգոստոսի 17-ին անցկացվեց «ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական լողի մրցաշարը: Այս քարոզչությունը մեր երկրի աղքատիկ բյուջեի վրա արժեք է 20 մլն 114 հազար ՀՀ դրամ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Լողի մրցաշարի համար ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը տրամադրել է 20 մլն 114 հազար դրամ՝ գրեթե 52 հազար դոլար: Եղել են դրամական մրցանակներ երկու տարիքային խմբերի, 1-10-րդ տեղեր գրաված մասնակիցների համար՝ «1-ին տեղ» 1.000.000 ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 500.000 ՀՀ դրամ, 3-րդ տեղ՝ 300.000 ՀՀ դրամ, 4-րդ տեղ՝ 100.000 ՀՀ դրամ, 5-10-րդ տեղ՝ 50.000 ՀՀ դրամ: Նշենք, որ հարկերը, տուրքերը եւ պարտադիր վճարները ներառված չեն: Կնքված պայմանագրերի տպագրված գովազդային նյութերի, մարզաշապիկների, հուշանվերների, հուշամեդալների եւ հավաստագրերի եւ այլ իրերի համար հատկացվել է 2 մլն 236 հազար դրամ: Մրցաշարի անցկացման, պարգևատրման անցկացման, տեսահոլովակի առկայության, հեռարձակման ապահովման համար վճարվել է 16 մլն 872 հազար դրամ:



Հարունակությունը՝ ArmLur.am կայքում:











ԲԱՑԱՌԻԿ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՆԱՂԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Հայաստանի Գիտությունների ակադեմիայի եւ գերմանական Մյունխենի համալսարանի հնագետները հնագույն Արսաւաս (հուն.՝ Արսաֆասա) քաղաքում հայտնաբերել են վաղ բրոնզեդարյան ճակատագրով անհայտ եկեղեցու մնացորդներ: Այս մասին հայտնում է Հայաստանի Հանրային ռադիոն մեջբերելով Գերմանիայի հինգերորդ խոշորագույն համալսարանի կողմից հրատարակված «Հայ-գերմանական թիմի համատեղ հայտնագործությունը հնագույն Արսաֆասա քաղաքում» խոշորագույն հոդվածը:



Եկեղեցիներ այստեղ հայտնի չէին, բայց մենք դրանք լավ գիտենք Միջերկրածովյան տարածաշրջանի արեւելյան մասից, որտեղ դրանք ծագել են մ.թ. 4-րդ դարից»: Արարատյան դաշտավայրում պեղումներով հայտնաբերված եկեղեցական կառույցը տիպաբանորեն համապատասխանում է վաղ քրիստոնեական համալիրներին: Խաչաձև տարածվող կառույցում հետազոտողները հայտնաբերել են նաեւ փայտե հարթակների մնացորդներ, որոնք, ըստ ռադիոածխածնային մեթոդով թվագրման, մ.թ. 4-րդ դարի կեսերի են: Ութանկյուն կառույցի տրամագիծը մոտ 30 մետր է, ունեցել է պարզ շաղախով հատակ եւ հախճապակյա սալիկներ: Իսկ մարմարե գտածոները ցույց են տալիս, որ կառույցը շռայլորեն զարդարված է եղել Միջերկրական ծովից բերված այս նյութով: Գերմանա-հայկական թիմը «Արտաքսատա» նախագծով» (AGAP) Հայաստանում է սեպտեմբերից: Մյունխենի համալսարանը, որի հնագետներն ընդգրկված են այս նախագծում, տեղեկացնում է՝ խումբը կշարունակի պեղումները եւ հույս

ունի նոր գտածոների մասին եւս փաստել, նաեւ պարզել՝ ում է նվիրված եղել այս եկեղեցին: Հոդվածում ներկայացվում է. «Արտաքսատա (Արտաշատ) Հայաստանում այն տարածքում է, որտեղ, ըստ ավանդության, բանտարկության մեջ է պահվել Գրիգոր Լուսավորիչը՝ Նախքան մեր թվարկության 301 թվականին հայոց Տրդատ III թագավորի կողմից քրիստոնեության ընդունումը: Այսպիսով, Հայաստանը դարձավ առաջին քրիստոնյա պետությունն աշխարհում: Նոր հայտնաբերված եկեղեցուց շատ փոքր հեռավորության վրա է միջնադարյան խոր Կիրակ վանքը, որը հիշեցնում է այդ ավանդույթը»: Հայ-գերմանական հետազոտական խումբը 2018 թվականից ուսումնասիրում է Արարատյան դաշտի հելլենիստական Արտաքսատա (Արտաշատ) մետրոպոլիսը: Հնագույն քաղաքի հնագիտական պեղումների նախագիծը ֆինանսավորում են Գերմանական հետազոտական հիմնադրամը եւ ՀՀ ԳԱԱ-ն: ՀՈՒԻ ԲԱՂՂԱՍԱՐՅԱԼ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՊԵՏՐԱԿՈՎԸ ԱՅԼԵՎԱՍ ԶԻ ԳԼԽԱՎՈՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ

Ալեքսանդր Պետրակովը այլեւս չի գլխավորի Հայաստանի ազգային հավաքականը: Այս մասին հայտնում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան: ՈԻԾՖԱ Ազգերի Լիգայի՝ հոկտեմբերի 13-ին կայացած Հայաստան-Հյուսիսային Մակեդոնիա հանդիպումից հետո Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Ալեքսանդր Պետրակովը հեռացվել է զբաղեցրած պաշտոնից:

ԵՎՐՈՊԱՅԻ Մ-17 ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Մ-17 հավաքականը Եվրոպայի Մ-17 առաջնության որակավորման առաջին փուլի շրջանակում հոկտեմբերի 12-ին մրցել է Սլովենիայի Մ-17 ընտրանու հետ: Մեր տղաները 1 գնդակ բաց թողեցին՝ արդյունքում գիշերով մրցակցին 0:1 հաշվով: Սլովենիա Մ-17 - Հայաստան Մ-17՝ 1:0 (0:0) Գոռնյա Ռադոնա, Տրատե Գոռնյա Ռադոնա մարզադաշտ Մրցավար՝ Ռոման Ժիտարի (Մոլդովա) Գոլը՝ Մլեկուժ, 56 Հայաստան 1. Արթուր Պետրոսյան, 3. Էդգար Պողոսյան, 4. Հայկ Ղուկասյան, 13. Արթուր Մովսեսյան, 15. Շանթ Բեյբուրյան, 8. Մարտին Շահգեղյան, 20. Հայկ Հովսեփյան, 10. Դավիթ Բատոյան, 9. Դավիթ Սիմոնյան (19. Հայկ Ստեփանյան, 78), 23. Մայքլ Ասիրյան, 11. Սարգիս Գասպարյան (18. Հարություն Մովսիսյան, 71) Պահեստայիններ՝ 12. Նուբար Գիշյան, 5. Դավիթ Դիսոյան, 6. Հայկազ Եղիազարյան, 14. Աշոտ Ոսկանյան, 16. Ավետ Կասպարով, 17. Գագիկ Ասատրյան Գլխավոր մարզիչ՝ Սարգիս Մովսիսյան:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«ԸՆԴՐԱՆՈՒՐ ԼԵԶՈՒ ԳՏՆԵԼ» ԿԱՐԳԱԽՈՍՈՎ ՆԱԽԱԳԻԾԸ

Երեւանում կանցկացվի «Ընդհանուր լեզու գտնել» կարգախոսով նախագիծը: Այն տեղի կունենա հոկտեմբերի 25-26-ը: «Ընդհանուր լեզու գտնել» նախագիծն իրականացնում գերմանական High Art Bureau ընկերությունը՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ: Փառատոնի շրջանակում հոկտեմբերի 26-ին, ժամը 17:00 Երեւանի Փոքր թատրոնում կկայանա ներկայացման պրեմիերա, որը ստեղծել են 30 երիտասարդներ Կրաստանից, Ուկրաինայից, Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից եւ Ռուսաստանից: 10 օրվա ընթացքում նրանք աշխատել են միջազգային պարուսույցների եւ երաժիշտների հետ՝ գտնելու ընդհանուր լեզու, որը գերազանցում է մշակույթի, ծագման, լեզվի, սեռի եւ հաշմանդամության տարբերությունները: Կատարողների միջազգային թիմում են Ուկրաինայի կրկեսի տնօրեն Լարիսա Աֆանասեան, Dobranoch խմբի երա-

ժիշտ Իլյա Գինդինը, Drum Theatre նվագախմբի հիմնադիր Ղենիս Վեդմեցկին, դուդուկահար Արտակ Խաչատրյանը, մուլտի ինստրումենտալիստ եւ կոմպոզիտոր Դիմիտրի Լեկվեիչվիլին, պարուսույց եւ մոդել Ալիկա Պաեսկեն, պարուհի, ժամանակակից խորեոգրաֆիայի լաբորատորիայի հիմնադիր Հասմիկ Թանգյանը: Բացի այդ, կանցկացվի «Դեպի հավասարություն. մշակույթը եւ կրթությունը երկխոսության մեջ» քննարկման նախագիծ, որը նպատակ ունի հաղթահարել հասանելիության մարտահրավերները Հայաստանի մշակութային եւ կրթական ոլորտներում երկխոսության եւ Գերմանիայի եւ Հայաստանի փորձագետների միջեւ փորձի փոխանակման միջոցով: Այն կկայանա հոկտեմբերի 25-ին: Թեման է՝ մշակույթի եւ կրթության մեջ մատչելիությունը եւ ներառականությունը: Միջոցառումը մասնակիցները կծանոթանան Գերմանիայի լավագույն փորձի օրինակներին, կմասնակցեն հայտնի փորձագետների հետ քննարկումներին եւ լուծումներ կմշակեն իրենց կազմակերպության համար: Քննարկումը կվարեն փորձագետներ դոկտոր Քրիստինա Շրյուբերսը, որը թանգարանային ոլորտի փորձագետ է եւ մշակութային հաստատություններում եւ

թանգարաններում ներառման եւ մատչելիության հարցերով խորհրդատու է, եւ դոկտոր Քեյթ Բրեյմենը՝ համադրող եւ արվեստի մանկավարժ:

ԷՐԵՒՐԻՆԻ-ԵՐԵՎԱՆԸ 2806 ՏԱՐԵԿԱՆ Է


«Հայաստանի Հանրապետության տոներին եւ հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածին համապատասխան՝ ՀՀ կառավարության 23.06.2005թ. թիվ 822-Ն որոշման համաձայն՝ հոկտեմբերի երկրորդ շաբաթ օրը նշվում է որպես Երեւանի օր: Այս տարի Երեւանի օրը նշվել է հոկտեմբերի 13-ին: Երեւանի-Երեւանը դարձել է 2806 տարեկան: Կիրակի ժամը 12:00-ից մայրաքաղաքի տարբեր վայրերում անցկացվել են տարաբնույթ միջոցառումներ: Կայացել են համերգներ՝ ջազ, ռոք, դասական եւ էստրադային ժանրերի մեջ: Եղել է բացօթյա սպորտային գոտի, անցկացվել են գինու եւ գարեջրի փառատոներ: Ժամը 21:00-ին Հանրապետության հրապարակում կայացել է օրվա գլխավոր միջոցառումը՝ եզրափակիչ տոնական համերգը, որտեղ ելույթ են ունեցել ամենասիրված արտիստները:

● Հոկտեմբերի 17-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Սասունցի David Copperfield» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:



ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Վարձը չմուծելու համար անջատել են լույսը՝ հաշվի չառնելով, որ սանն անջափահաս երեխա կա: Ի՞նչ անել եւ ու՞մ դիմել:  
Ռախա Չարությունյան (36 տարեկան)



**ՊԱՏԱՍԽԱՆ.** «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից բաժանորդի էլեկտրամատակարարումը դադարեցնելու դեպքերը սահմանված են Ձեզ հետ կնքված պայմանագրով, մի շարք այլ իրավական ակտերով: Մատակարարն իրավունք ունի դադարեցնելու Ձեր տան էլեկտրամատակարարումը, եթե արդեն իսկ սպառված էլեկտրաէներգիայի դիմաց կանոններով եւ պայմանագրով սահմանված ժամկետներում եւ կարգով վճարումներ չեն կատարվել բաժանորդի կողմից, ընդ որում՝ վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում մատակարարն իրավունք ունի դադարեցնել Ձեր էլեկտրամատակարարումը առնվազն 3 օր առաջ հեռուստատեսությամբ կամ սպառողին հասու այլ ձեւերով (հայտարարություն փակցնելով ջրամուտքերում, փոստային բաժանմունքներում եւ այլն) զգուշացնելուց հետո: Պարտքի ամկայության դեպքում մատակարարը չպետք է դադարեցնի Ձեր տան էլեկտրամատակարարումը, եթե Ռուք ներկայացրել էք մատակարարի համար ընդունելի վճարման երաշխիքներ կամ նրա հետ կազմել եք պարտքի մարման ժամանակացույց: Ռուք կարող եք ներկայանալ տարածքային սպասարկման գրասենյակ, հայտնել չվճարման պատճառները եւ խնդրել՝ կնքելու վճարման ժամանակացույց, որով հնարավորություն կստանաք մաս առ մաս կատարելու կուտակված պարտքի վճարումները: Պետք է նկատի ունենալ, որ պարտքի մարման ժամանակացույցի խախտման դեպքում էլեկտրամատակարարումը կրկին կարող է դադարեցվել:

**Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով**


«ԺՈՂՎՈՐԳ». Այն դեպքում, երբ Ձեր կողմից պարտքը մարելու մասին վճարման անդորրագիրը մատակարարին ներկայացնելուց հետո վերջինս վերոնշյալ ժամկետներում չի վերականգնել էլեկտրամատակարարումը, ապա դա կդիտվի խախտում մատակարարի կողմից:

Էջը՝ ԱՎՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՎՐԳ

ՀԱՐՑ. Եթե բուհում ֆինոբյուսն անադարացիներն անբավարար են գնահատել, ի՞նչ անել եւ ու՞մ դիմել:

Լիլիթ Ավետիսյան (20 տարեկան)



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Մինչ բողոքարկելը անհրաժեշտ է պարզել, թե արդյոք ավարտական քննության ընթացքը ձայնագրվում էր, թե ոչ: Եթե այն ձայնագրվում էր, ապա Ռուք իրավունք ունեք դիմել եւ ստանալ ավարտական քննության Ձեր պատասխանի ձայնագրությունը եւ ուսումնասիրել, թե որքանով է համապատասխանում տրված գնահատականը Ձեր պատասխանին: Բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավարը, ստանալով Ձեր գրավոր բողոքը, պարտավոր է դրա հիման վրա պետական քննությունն ընդունող հանձնաժողովում քննել այն եւ դրա վերաբերյալ կայացնել համապատասխան որոշում՝ բավարարելով կամ մերժելով այն: Բավարարվելու դեպքում ղեկավարը հանձնաժողովի համաձայնությամբ իրավունք ունի փոփոխելու կայացված որոշումը կամ նշանակելու նոր քննության օր: Ձեր բողոքը մերժվելու դեպքում այն կարող եք բողոքարկել ինչպես ըստ վերադասության, այնպես էլ դատարան:

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն**

«ԺՈՂՎՈՐԳ». Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողը բարձրագույն (հետբուհական) կրթության սուբյեկտ է, որն ունի մի շարք իրավունքներ եւ պարտականություններ: Այդ իրավունքների թվին է դասվում սովորողի՝ բողոքարկման իրավունքը: Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողն իրավունք ունի բողոքարկելու բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավարության կայացրած որոշումները, հրամաններն ու կարգադրությունները: Բողոքարկումը կատարվում է գրավոր ձեւով՝ բողոքն հասցեագրելով բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավարին: Բողոքն իր մեջ պետք է պարունակի Ձեր բոլոր առաջարկություններն ու դիտարկումները՝ կապված ավարտական քննության ժամանակ Ձեր պատասխանի հետ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Իտալիայի Բարի գավառի Ակվավիվա դելե Ֆոնտի քաղաքում կայացել է երիտասարդ երաժիշտների Colafemmina Piano 8-րդ միջազգային մրցույթը: Առաջին անգամ մրցույթն այս տարի ունեցել է նաեւ մասնակից Հայաստանից՝ Երեւանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի 2-րդ դասարանի սան Անի Մելիքյանը: 7-ամյա հայուհին արժանացել է երիտասարդ դաշնակահարների անվանակարգի առաջին բացառձակ մրցանակի:

ԲԱԺՆՈՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը  
Բաժանորդագրվելու  
համար կարող եք դիմել



«Հայփոստ» ՊՓԲԸ  
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ  
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդախտաբանաբար ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ

հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ \_\_\_\_\_

Ազգանուն՝ \_\_\_\_\_


Առաքման հասցե՝ \_\_\_\_\_

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ \_\_\_\_\_

Հեռ.՝ (060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Ծիրակ	+ 3 + 7 +14 + 18	Արարատ	+ 9 + 11 +19 + 22
Կոտայքի լեռներ	+ 3 + 6 +13 + 15	Արմավիր	+ 7 + 10 +19 + 22
Կոտայքի նախալեռներ	+ 9 + 11 +17 + 19	Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +12 + 15
Գեղարքունիք	+ 3 + 8 +11 + 15	Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 11 +19 + 21
Լոռի	+ 3 + 7 +12 + 16	Սյունիքի հովիտներ	+ 7 + 12 +18 + 23
Տավուշ	+ 7 + 13 +15 + 19	Սյունիքի նախալեռներ	+ 1 + 5 +15 + 18
Արագածոտնի լեռներ	+ 1 + 5 +12 + 15	ԼՂՀ	+ 2 + 6 +15 + 18
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 11 +17 + 20	Երեւան	+15 + 18 +22 + 24

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ  
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2, հեռ՝ 010 54-64-23  
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03U089086  
տրված է 24.11.2010  
Ստորագրված է տպագրության 14.10.2024  
Տպաքանակ՝ 3968  
Կազմել է Վարդանիս Կարամյանը, Վ. Կարամյանի 2021

Գլխավոր խմբագիր՝ ԶՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրայնաչափում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրատարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրատարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: